ՊԱՇՏՈՆ	Ֆինանսական մոնիթորինգի բաժնի մասնագետ վերլուծաբան
ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ	Լրիվ դրույք
ԱՇԽԱՏԱՆՔԻ ՎԱՅՐ	ք. Երևան, ՀՀ
ԱՇԽԱՏԱՆՔԸ ՍԿՍԵԼՈՒ ԱՄՍԱԹԻՎ	Հնարավորինս շուտ
ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՎԵՐՋՆԱԺԱՄԿԵՏ	14/02/2025թ.
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԺԱՄԿԵՏ	Անժամկետ՝ 3 ամիս փորձաշրջանով

«Այդի Բանկ» ՓԲԸ-ն փնտրում է Ֆինանսական մոնիթորինգի բաժնի մասնագետ վերլուծաբանի ստորև ներկայացված պարտականությունների իրականացման նպատակով:

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Բարձր ռիսկ և շրջաբերականներով սահմանված հատկանիշներ պարունակող հաճախորդների հետ գործարար հարաբերությունների և գործարքների հաստատում/մերժում և եզրակացության տրամադրում,
- Հաճախորդների սպասարկող ստորաբաժանումների կողմից ուղարկված հարցումների, այդ թվում՝ Բանկում գործող ցուցակների հետ համընկնությունների դիտարկում և եզրակացության տրամադրում,
- Բանկի մասնաճյուղերի մոնիտորինգի իրականացում,
- ՀՀ ԿԲ պարտադիր ներկայացման ենթակա հաշվետվությունների կազմում,
- Բանկի հաճախորդների կողմից կատարված կամ ի օգուտ Բանկի հաճախորդի սպասող գործարքների վերաբերյալ միջնորդ բանկերի կողմից հարցումների պատասխանների կազմում և տրամադրում,
- Կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության բացահայտման նպատակով վերլուծությունների իրականացում, դրանց արդյունքների փաստաթղթավորում,
- Գործարքի հաստատում, մերժում, գործարար հարաբերության դադարեցում, կասեցում, գույքի սառեցում,
- Բանկի տարածքային և կառուցվածքային ստորաբաժանումների աշխատակիցների համար դասընթացների իրականացնում, ուսուցման կազմակերպում,
- Բանկի ներքին իրավական ակտերով սահմանված այլ գործառույթների իրականացում:

ՊԱՀԱՆՋՎՈՂ ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄՆԵՐ

- Բարձրագույն կրթություն,
- 1-3 տարվա աշխատանքային փորձ ֆինանսական ոլորտում,
- Բանկային օրենսդրության իմացություն,
- Համակարգչային գիտելիքներ,
- Օտար լեզուների իմացություն (անգլերեն և ռուսերեն)
- Հաղորդակցման հմտություններ,
- Վերլուծական հմտություններ,
- Կատարողական ցուցանիշների ապահովման ունակություն,
- Թիմային մտածողություն,
- Ճշտապահություն և պատասխանատվության զգացում,
- Կազմակերպչական հմտություններ և ժամանակի արդյունավետ կառավարում,
- Փորձով և գիտելիքով կիսվելու հմտություն նոր աշխատակցի մենթոր լինելու համար,

- Խնդիրների արագ և արդյունավետ լուծման կարողություն, միաժամանակ մի քանի առաջադրանք կատարելու կարողություն,
- Փոփոխություններին արագ արձագանքելու կարողություն,
- Մանրուքների նկատմամբ ուշադրություն,
- Թիմում արդյունավետ աշխատելու ունակություն,
- Գործարար էթիկայի նորմերի իմացություն և դրանց կիրառում:

ԼՐԱՑՈՒՑԻՉ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Փորձաշրջանի բարեհաջող ավարտից հետո Բանկն իր աշխատակիցներին առաջարկում է արտոնությունների լայն փաթեթ, մասնավորապես, բժշկական ապահովագրություն, պարգևատրման ճկուն համակարգ, սպորտակումբների ծառայություններից օգտվելու կորպորատիվ փաթեթ, արտոնյալ պայմաններով բանկային ծառայություններ և այլն:

ԴԻՄԵԼՈՒ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

Եթե ձեր գիտելիքները, մասնագիտական փորձն և որակավորումները համապատասխանում են վերը նշված հաստիքի պահանջներին և և դուք հետաքրքրված եք միանալու ԱյԴի Բանկի թիմին՝ անցեք հետևյալ հղումով https://idbank.bamboohr.com/careers/82 : Հարցազրույցի կիրավիրվեն նախնական ընտրությունը անցած դիմորդները:

ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«ԱյԴի Բանկը» հիմնադրվել է 1990թ.-ին «Անելիք Բանկ» անվանումով, իսկ 2018թ. Հունիսի 4-ից Բանկը ներկայանում է «ԱյԴի Բանկ» անվանումով:
ԱյԴի Բանկի առաքելություն է լինել առաջին ընտրության Բանկ հաճախորդների համար որպես լավագույն նորարար Բանկ՝ հաճախորդներին տրամադրելով անհատական մոտեցմամբ արդիական թվային լուծումներ: Բանկի մասին հավելյալ տեղեկատվության համար կարող եք այցելել Բանկի պաշտոնական կայքը https://www.idbank.am/: